էր եկեալ վասն ուրախութեան և չարութեան, այս-
ինքն՝ Թըլթըլն և Պարմախսուզն, Պունիաթն և Քեօրն։
Եւ երբ զթուղթքն առին բազում ուրախութեամբ
յայտնի տեսողացն և ընդ միմեանս անդ խօսս բանան
և ասեն՝ կարդալ պարտիմք զբանադրանքս. և ասեն
Այո՛, այո՛. և ոմանք ասեն՝ Չկարէք. և Քեօրն ասէ՝
Ոչ տամք կարդալ զսայ՝ անէծքս և նզովքս յիմ վե-
րայ եղիցի։ Այսպէս ուրախութեամբ ելեալ գնացին։
Զայս լուեալ մեր՝ գնացաք ի ժամ և նստաք անդ, և
յետ ժամուն ժողովեցան բարեկամք և սիրելիք առ
գաւթովն եկեղեցոյն. յետ բազում խօսից և ուղար-
կեցին մարդ առ աթոռակալն մեր՝ թէ տացէ զթուղ-
թըն զի սմա է եկեալ, տացեն զթուղթն իւր սմա։
Եւ ևս Տէրտէրն իմ բազում բան ասացեալ, և վեր-
ջինն այս եղև թէ Ոչ ընդունիմ զնա բաց, այլ կնքով
կաթողիկոսին առ իս դարձցի։ Եւ ոչ է գտեալ զնա
անդ. և այլ երէց ուղարկեցին առ նա՝ թէ տացէ. և
գտեալ զնա, և նա ինքեաւ արարեալ թէ Կրկին ետու
ի Բարսեղն. և կրկին մարդ ուղարկեալ առ իրիցունսն՝
զի ոչ կարդայցեն զթուղթն։ Եւ յետ պահու ինչ եկն
Յարութիւն Չէլէպին ի մուֆտոյ, և ասացեալ զիրս
բանին. և յետ պահու ինչ ասացեալ մեզ թէ Գնացէ՛ք
յԱստուածատուր վարդապետն։ Եւ ի հասարակել գի-
շերոյս ելեալ գնացաք ի Սուրբ Գէորք և Մարտիրոս
վարդապետն ելեալ ընդ մեզ եկեալ, և զիր գրեալ
մեծ վարդապետն (Աստուածատուր) աթոռակալաց և
իշխանաց թէ Գիր է եկեալ, ոչ ոք ունի իշխանութիւն
բանալոյ զնոսա առանց հրամանի մեր։ Եւ մին այլ
Բարսեղին ուղարկեաց թէ Թղթերն ամենայն ի մօտ
իմ պարտիք և ես բացից զնոսա։ Եւ գնացաք յԱս-
տուածածին եւ Խաչատուր վարդապետն եւս եկն եւ
նստաւ եւ բարեկամք յիշխանաց Գ եկեղեցոյս եկեալ
նստան առ նոքօք և ուղարկեցին զթուղթն, յոր մօտ